ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

Նախարար՝ Գևորգ Պապոյանին

Դիմող՝ Արթուր Վարդերեսյան,

Արտոնագրային հավատարմատար

ՀՀ, ք. Երևան, Ազատության պ. 24/15

25.11.2025թ.

ԴԻՄՈՒՄ

(ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդում ընդգրկվելու համար)

Հարգելի պարոն Պապոյան,

Սույն դիմումով խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ նաև՝ «Հասարակական խորհուրդ») կազմում, քանի որ երկար տարիներ շարունակ գործունեություն եմ իրականացնում ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գործունեության հիմնական ոլորտներից՝ մտավոր սեփականության օբյեկտների գրանցման և պաշտպանության բնագավառում:

Հայտնում եմ Ձեզ, որ մասնագիտական փորձառությունս և ոլորտային գիտելիքներս կարող են նպաստել Հասարակական խորհրդի նպատակների իրագործմանը, հաշվի առնելով ստորև ներկայացվող հակիրճ տեղեկատվությունը, որոնց մասին ներկայացվում են նաև կից փաստաթղթեր:

Ոլորտային գործունեության մասին հակիրճ տեղեկատվություն.

1. ՀՀ Մտավոր սեփականության օբյեկտների գրանցման և պաշտպանության ոլորտում արտոնագրային հավատարմատար, արտոնագրի համարը՝43
2. «Մենք Քոնսալթինգ» ՍՊԸ–ում 2017 թվականից կառավարիչ գործընկեր եմ հանդիսացել, իսկ 2019 թվականից մինչ օրս՝ տնօրեն: «Մենք Քոնսալթինգ» ՍՊԸ–ն գործունեություն է իրականացնում մտավոր սեփականության օբյեկտների գրանցման և պաշպանության ոլորտում, որտեղ մասնավորապես խորհրդատվություն եմ տրամադրում կորպորատիվ իրավունքի, մտավոր սեփականության և թվային փոխակերպման ոլորտներում ինչպես ՀՀ–ում,

այնպես էլ ՀՀ տարածքից դուրս գործունեություն ծավալող իրավատերերին: Առավել մանրամասն իմ գործառույթների մասին տես՝ կից ներկայացվող տեղեկանքում:

3. 2017 թվականից մինչ օրս հանդիսանում եմ «Մտավոր սեփականության իրավատերերի ակումբ» ՀԿ–ի համահիմնադիր–տնօրեն, որտեղ իրականացնում եմ ընդլայնված գործառույթներ ինչպես այս կազմակերպության համակարգման, այնպես էլ մտավոր սեփականության իրավատերերին խորհրդատվության տրամադրման և իրավունքների պաշտպանության բնագավառն եմ համակարգում: Առավել մանրամասն իմ գործառույթների մասին տես՝ կից ներկայացվող տեղեկանքում:
4. 2024 թվականից մինչև օրս հանդիսանում եմ՝ «Արտոնագրային հավատարմատարների ասոցիացիա» ՀԿ–ի փոխնախագահ–անդամ,
5. 2009–2016թթ. ՀՀ Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության մտավոր սեփականության և արվեստի ոլորտի հանցագործությունների դեմ պայքարի աշխատակից, այնուհետ նաև՝ բաժնի պետ:
6. 2001-2007թթ. միջազգային վերապատրաստում և պրակտիկա եմ ունեցել՝ Արտոնագրերի և ապրանքային նշանների կազմակերպության Մտավոր սեփականության Ակադեմիայում (Վաշինգտոն, ԱՄՆ) և Հնդկաստանի Մանիշ բիզնես կենտրոնում (Նոր Դելի, Հնդկաստան):
7. 2017–2019թթ. «Microsoft» կազմակերպության ծրագրային ապահովման կառավարման պատասխանատու Հայաստանում:
8. 2002-2004թթ. Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանի Տեղեկատվական անվտանգության դասախոս:

<u>Կից ներկայացվում են՝</u>

1. Ինքնակենսագրական,
2. Արտոնագրային հավատարմատարի վկայականի պատճենը,
3. «Մենք Քոնսալթինգ» ՍՊԸ–ի կողմից տրված տեղեկանք,
4. «Մտավոր սեփականության իրավատերերի ակումբ» ՀԿ–ի կողմից տրված տեղեկանք:

Հարգանքով՝

Արթուր Վարդերեսյան